

Դ Ա Լ Ա Ր Կ Ե Ա Ն Ք

(ՎՈՐՈՆՈՅԻ ԵՐԻՑԱՍԱՐԴԱՅԱՆ ՓՈՐՁԵՐԸ)

Ե.— ՍԵՌԱՅԻՆ ԳԵՂՁԵՐԸ

Մեր նախորդ յօդուածներուն բովանդակութիւնը ներածութեան մը հանգամանքը ունի պարզապէս: Եւ իրաւ, մենք մինչեւ այժմ բացատրեցինք սա թէ՛ մարդկային մարմինին մէջ գոյութիւն ունին զանազան գեղձեր, որոնք կը հաւասարակշռեն բջիջներու գործունէութիւնը, և մեծ դեր մը կը խաղան կեանքի ընթացքին վրայ: Անոնց կարգին, չափազանց կարեւոր տեղ մը կը գրաւեն սեռային գեղձերը, զորս պէտք է նկատել մեր կեանքի աղբիւրը: Հետեւաբար, անհրաժեշտ է որ աւելի երկար խօսինք սեռային գեղձերու մասին: Այսպէս, կը մտնենք մեր յօդուածաշարքին ամէնէն հետաքրքրական մասին մէջ: Մէկ խօսքով, կը հասնինք Վորոնոֆի փորձերուն:

Քննենք սեռային գեղձերը և անոնց ընախօսութիւնը: Նախ յայտնենք թէ բաց պիտի խօսինք. անոնք որ պարկեշտութիւն կը համարեն չխօսիլ սեռային գործարաններուն մասին, կրնան փակել այս էջը: Մենք կ'արհամարհենք ասիական-մահմետական այն աւանդութիւնը, որ մարմինին զանազան մասերուն հանդէպ նամէհրամ կը թելադրէ: Ժողովուրդներ կան, որոնք կ'արգիլեն ցուցադրել մերկ ոտքեր, ուրիշներ կը բանադրեն անոնք, որ կը ցուցադրեն իրենց երեսը: Եւ վերջապէս քրիստոնէութիւնն ալ, հետեւելով այդ անհեթեթ աւանդութեան, արգիլեց խօսիլ սեռային գործարաններուն մասին: Եւ դեռ մինչեւ այսօր ունինք սերունդ մը, որ չի ճանչնար այդ ամօթոյքը, ինչպէս կը կոչուէր երբեմն: Սակայն անիմաստ չէ՞ կարծիք ի տես սեռային գործարաններուն, կամ առնուազն ծիծաղելի չէ՞ տգէտ մնալ մարմինին կարեւոր մէկ մասին ընտանացման թեան մասին:

Բժիշկները նամէհրամ չունին:

Սեռային գեղձեր կը կոչուին ամորձիքը և ձուարանը:

Ամորձիքը.— Այրերուն սեռային մէկ գործարանն է ամորձիքը, ժողովրդական բառով մը՝ կոկով: Ժողովուրդը, դարձեալ՝ տուրակ կը կոչէ այն գոց թաղանթը, որուն մէջ կը գտնուին երկու կլորակ մը-սագունդեր, նմանութեանք պատճառաւ՝ հաւկիւմ: Արդ, բուն գեղձը այս հաւկիւթն է, որ կը կշռէ 21 կրամ: Իւրաքանչիւր հաւկիւթ ունի կարծր և պսպղուն մաշկ մը, որ իր փայլին պատճառով կը կոչուի լսնաթաղանթ (albuginée): Լսնաթաղանթը թեւ արձակելով դէպի ներս, կը կազմէ խորշեր, որոնք լեցուն են բարակ խողովակներով:

Այդ խողովակներուն մէջ կը պատրաստուի սերմը: Աերմնային խողովակները այնքան դարձդարձիկ ճամբայ մը կը գծեն, որ եթէ ծայր ծայրի գննեք, անոնց երկարութիւնը կը հասնի մէկ քիլոմէթրի: Աերմնային խողովակները, ամորձիքին վերին եզրերին վրայ իրարու միանալէ յետոյ, կը մտնեն մակամորձիքին մէջ, որ որդի մը նըման շուլլուած է ամորձիքին գլխուն: Մակամորձիքին մէջ մտնելու պահուն, սերմնային խողովակները կը դառնան ուղիղ, ասիկա կը յիշեմ, որովհետեւ յետագային, Շթայնախի երիտասարդացման փորձերը բացատրելու առնել, պիտի անդրադառնամ: Աերմնային խողովակները կ'անցնին մակամորձիքին գլխէն մինչեւ պոչը, ուր աւելի շխտակ ձեւ մը կը ստանան և կը վերածուին մէկ խողովակի: Արտահան խողովակն է այդ, որ սերմը կը թափէ մասնաւոր փոշտերու (*vesicules séminales*) մէջ:

Կը տեսնուի թէ ամորձիքը գեղձ մըն, որ կ'աշխատի դուրս թափելու համար իր արտադրութիւնը: Մինչեւ այժմ, գիտունները կը կարծէին թէ ամորձիքներուն պաշտօնն էր սերմ պատրաստել, դուրս թափելու համար: Հաստատուեցաւ սակայն որ սերնդագործութենէ զատ, ամորձիքը ունի ուրիշ հրաշագործութիւն մը: Այս գեղձին մէջ կ'աշխատին (6) եռամիլիոն ըջիջներ, որոնք իրենց մասնաւոր արտադրութիւնը կը թափեն մեր արեան մէջ: Հոս, գիտունները երկու բանակի կը բաժնուին. ֆրանսական ճակատը, ինչպէս նաև Վորոնոֆ, կ'ընդունի որ այդ ըջիջները անկախ են և կ'աշխատին իբրև ներքնակոս գեղձ, իսկ գերմանական ճակատը, ինչպէս նաև ֆրանսացի, Ռէթթէրէր, կ'ընդունի որ սերմնային ըջիջները կ'արտադրեն թէ արտահոս սերմը և թէ նեքնահոս հիւթը: Այս վիճարանութիւնը օգտակար չէ «Բուժանք»ի ընթերցողներուն, մեր նպատակն է ներկայացնել, որ երկու ճակատն ալ կ'ընդունին թէ ամորձիքը սերնդագործութենէ զատ կը կատարէ ներքնահոս գեղձի մը պաշտօնը: Ահա այս վերջին գիտողութեան վրայ հիմնուած է Վորոնոֆի երիտասարդագրութեան հետաքրքիր:

Գտնար մը. Կիւր քաղաքի սեռային մէկ գործարանն է ձուտրանը, որ նուազի ձեւ ունի: Անոր պաշտօնն է արտադրել հաւկիթ, որ պիտի սերնդագործուի և պիտի ածի արգանդին մէջ: Բայց այս պաշտօնէն դուրս, այս իրական գործարանը ևս ունի ներքնահոս գեղձի մը գերը: Մեր այս յօդուածաչարքին մէջ, պիտի խօսինք միայն ամորձիքի պատուաստի մասին: Այնպէս որ զանց կ'ընենք ասիկ աւելի մանրամասնութիւն: Էականը այն է, որ սեռային գործարանները, երկու սեռերու մէջ ալ, սերնդագործութենէ զատ, իբրև նաև ներքին գեղձ, մեծ դեր կը խաղան կեանքի ընթացքին վրայ:

Յաջորդով պիտի ներկայացնենք սեռային ներքնահոս գեղձերուն՝ փորձնական բնախօսութիւնը, այսինքն, ամորձիքը կամ ձուարանը ինչ ազդեցութիւններ ունին մարդոց վրայ, ի՞նչ կը կորսնցնեն մարդիկ՝ զրկուելով, և ի՞նչ կը շահին նոր ամորձիք և նոր ձուարան ստանալով:

ԲԺ. Շ. ԱՅՎԱԶՅԱՆ

ՄԱՅՐԵՐՈՒՆ ՄՆՈՒՆԴԸ

Դուք մայրեր, որ յղի էք կամ արդէն ծիծ կուտաք ձեր երախային, լաւ ուշադրութիւն ըրէք ձեր սնունդին:

ՕԳՏԱԿԱՐ ՈՒՏԵԼԻՔՆԵՐԸ

Ընդեղէններ.— Թափիռքա, բրինձի կամ ցորենի աղցուածը, դրամած եւ զանազան ալիւրներ:

Ալիւրային կանանչ եղէններ.— Ոսպ, թարմ կամ չոր ոլոռն, գետնախնձոր: (Զգուշացէք չոր լուբիայէն, եթէ ձեր աղիքները կազ կը շինեն):

Պարմ կանանչ եղէններ.— Եփած աղցաններ, կանանչ լուբիա, չոմին (սպանախ), լոլիկ, ձիթապտուղ, սմբուկ (փաթլիճան), դդում: Պտուղներ.— Պանան, արմաւ, նարինջ, թուզ, ընկոյզ, կաղին նուշ, թարմ եւ չոր խաղող, խնձոր, տանձ, գեղձ, ծիրան, կեռաս, ելակ: Այս պտուղները պէտք է հասունցած ըլլան կամ եփուած:

Կենդանական սնունդներ.— Կաթ, կարագ, հաւկիթ, միս, հաւեղէն, թարմ ձուկ:

ԲՎպելի.— Պարզ կամ հանքային ջուր:

ՎՆԱՍՍԱԿԱՐ ՈՒՏԵԼԻՔՆԵՐԸ

Զեփած կանանչ եղէններ.— Բողկ, զանազան աղցաններ (սալաթա, թուրշի):

Պահածոյ միսեր.— Ապուխտ, (փաստըրմա), երշիկ (սուճուխ) եւլն, կարելի է եփած ժամպօն ուտել:

Բոլոր որսի միսերը, երբ մանաւանդ քանի մը օր պահուած են: Բոլոր համեմները.— Պղպեղ, չաման, մանանխ, սալցաներ: Սերով պատրաստուած խմորեղէններ.— Շաքարեղէններ եւ չոքոլայի պոնպոններ:

Բոլոր ոգելից ըմպելիները.— Մանաւանդ լիքէօւները, գոնեակ, ըմպ եւլն:

Զգուշացէք պնդութենէն, ուտելով առատ կանանչեղէն և պտուղ: